№ 48 ԹԷՀԵՐԱՆ ՇԱԲԱԹ 17 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1894 № 48

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ՇԱՒԻՂ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„ՇԱՒԻՂԸ“ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» Տարեկան գինն է 10 դրան, կէս տարուանը 6 դրան. առանձին համարները 5 շահի. արտասահմանում տարեկան 8 ֆրանկ կամ 3 բուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 բուբլի: Թէհրանում դուռում են միմիայն խմբագրատան մէջ։ Մեր հասցէն. Téhéran Rédaction CHAVIGH

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է առաւօտեան 8—4 ժամը: Կիրակի եւ տօն օրերը 10—2 ժամը: Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 1 շահի:

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1895 Թ.

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ **„ՇԱՒԻՂ“** ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„Շաւիղը“ կը հրատարակուի Թէհրանում (մօտաւորապէս կրկին մեծութեամբ) նոյն ծրագրով և նոյն ուղղութեամբ։ „Շաւիղի“ բաժանորդագրինն է մէկ թուման, կէս տարուանը վեց դրան։ Արտասահմանում՝ 3 բուբլի կամ 8 ֆրանկ. կէս տարուանը 2 բուբլի կամ 4 ֆրանկ։

Արտասահմանից դրամական ծրարները կարող են ուղարկել հետևեալ հասցէով. Черезъ Баку Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. А. Бекъ-Назарову. Իսկ նամակներ և թղթակցութիւններ հետևեալ հասցէով Téhéran, Rédaction „CHAVIGH“.

Դավրէժում ցանկացողները կարող են դրուիլ Բաղդասար Միլիք Սարգսեանցի մօտ, Սալմաստում Յովհաննէս Ադրէսեանցի մօտ, Արտաբիլում՝ Յակոբ Էլչիբեկեանի մօտ, Նոր-Զուղայում Յովսէփ Բարսեղեանցի մօտ, Բուշիրում՝ պ. Կ. Զէյթունեանի մօտ, Մարաղայում Մելքոն Խալափեանցի մօտ Ռաշտում՝ Ալէքսան Յովսէփեանցի մօտ:

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունւում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչու ենք մտրակում.—ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ Նամակ Դավրէժից: Նամակ Ուրմիայից: Նամակներ խմբագրութեան: Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլի Տեսութիւն. Արտաքին լուրեր.— Յայտարարութիւններ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գանձեր:

ԻՆՉՈՒ ԵՆՔ ՄՏՐԱԿՈՒՄ

Շատ անգամ մեզ դիտողութիւն են անում թէ ինչու խիստ քննադատի դեր ենք կատարում, և առանց ի նկատի ունենալու անձնաւորութիւններ և պաշտօնի մեծութիւններ, անխնայ հարուածում ենք այս կամ այն անձնաւորութեան, բարձրաստիճան եկեղեցականին եւն: Առանց ամաչելու այն կարծիքն են կազմում որ իբր թէ այս կամ այն լօռուածի գրողը, այս ու այն քննադատը, բողոքական են եւն... և այդ՝ այն խակ կարծիքների արդիւնք է, որ իբր թէ լուսաւորչադաւանն հայը իրաւունք չունի և չպիտի էլ ունենայ եկեղեցականների կամ իւր դաւանութեան պատկանող մեծ անձերի մասին կարծիք յայտնել. եթէ կան այդ տեսակ մարդիկ, ուրեմն նրանք անպատճառ բողոքական են և կամ այլ բան։

Արդեօք մեր մէջ քնչ ուրախալի երեւոյթներ կան որ մեզ ետ կանգնեցնեն այդ ծանր, միևնոյն ժամանակ տխուր, պարտականութիւնից։ Քնչ ուրախալի և միխիթարական երեւոյթներ, որ զբաղեցնէին մեզ և նրանով հեռացրէին պահ մի, անուշադրութեան տալինք մեր միջի զազրալի եւ սողունալին երեւոյթները։

Ուր յածում ես աչքդ, տեսնում ես կեղտոտութիւններով լի գործեր, պախարակելի վարմունքներ. դարձիր մի այլ կողմ և կը նկատես անկարգութիւնների, խառնակութիւնների մի շփոթ, համեմուած ապիկարութիւններով. մի այլ կողմ և աչքիդ կը զարկէ քողի տակ ծածկուած տխուր և մռայլ պատկերներև հրէշներ, որոնք հեղինակ են ամեն տեսակ քրստմնելի չարագործութեանց։ Մի ընդհանուր հայեալք հոլի տարաալոյման կեանքի վերայ և կը գտնէք նորա մէջ ամէն բան փչացած, այլայլ դակուած։

Խակ դիսցիպլին (discipline) արդէն գոյութիւն չունի։ Այսօր կաթողիկոսն իսկ, որ պիտի այդ յատկութեան շնորհիւ կարողանայ գործ տեսնել, թոյլ է տալիս շատ անախորժութիւններ։ Մենք, ինչպէս տիներ, մանաւանդ դանդեր, որոնք իրենց խոշոր փոս աչքերը չռել էին մեզ վերայ։ Դրանց կողքին էր պրոֆեսսորի երկար գաւազանը, որով Ֆոխտը շատ էր սիրում օդը ծեծել, երբ մանաւանդ կամենում էր իւր հակառակորդ գիտնականների եւ գիտութեան դէմ ճառամարանող աստուածաբանների դէմ շանթալից հեգնութիւններ արձակել։

Պրոֆեսսորը նոր էր մտել եւ դեռ գաւազանը ծեռքում չէր։ Նա գրեթէ չէր էլ նայում լսողներին. գլուխը կռաբրած գանդերի վերայ, աջ ծեռքով ռիթմային հարուածներ էր տալիս մի գանդի եւ ցած ձայնով խօսում էր։ Խօսքերը ընդհատւում էին երբեմն կուրծքից դուրս ցայտող ընդհատ հաչերով։

Նայում եմ ծերունի վեհափառ գիտնականին, նորա հեգնող գծերով դէմքին եւ նորա սեղմուած բերանի կծու ժպիտով անկիւններին... տեսնում եմ աջ ծեռքի կիսաձեռնոցը եւ չոր կաշւով միայն ծածկած մատները։ Նայում եմ շքեղ սպիտակ գլխին, շարժուն աչքերին, որոնք երբէք չեն ղադարում կրակ ու բոց արձակելուց։

Սոջուս էր մի անգամ եւս այն հոչակաւոր հրատարակչի ու գիտնականը, որ 1848ի Գերմանական նշանաւոր գործողներից մէկն էր, որ աշխուժութեան եւ աշխատութեան տիպար է ներկայացնում իւր ծերութեան այդ հասակի մէջ իսկ։

Աջ ծեռքը, այժմ մի մարդկային ջանդի վերայ, աչքերովն ասելի քան բերնով, խօսում էր նա։ Եւ նորա ձայնը հետզհետէ ասելի բարձրանալով, սկսում էր սրանը ընդացնել։ Այդ ձայնի մէջն էր որ գիտնականի հեղինակութիւնն էր փայլում. այդ ձայնը, որին չէ կարելի չը հաւատալ, չը վստահիլ—դա Գիտութեան, դա Ճշմարտութեան ձայնն էր, խրոխտ եւ ահեղ, անյողդորդ եւ յստակ։

Աչս նա բարձրացրեց իւր գլուխն ու ցնցեց։ Ձեռքին ունէր մի մարդկային ջանդ։ Դանն ծայիտը բերնի անկիւններին, նայեց նա բոլորին եւ երա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԱՆԳԵՐ

I

Երազում էի։

Որպէս թէ գտնւում էի համալսարանի այն մեծ սրահում, ուր պրոֆեսսոր Կարլ Ֆոխտն էր կարդում իւր դասախօսութիւնները։

Նստել էի ամենավերջին նստարանի վերայ։ Լսարանը, ինչպէս միշտ, այդ օր էլ լիքն էր բերնէբերան։ Առջեւի նստարանները բռնել էին ռուս ուսանողուհիները, որոնք ճանաչւում էին իրանց կլորտած մազերից. նրանցից յետոյ ֆրանսացի ուսանողներ... եւ այսպէս ոչ մի դատարկ տեղ չէր մնացել։

Դէմ ու դէմ, ամբիոնի պատի վերայ, շարուած էին պատկերներ, որոնք զանազան տեսակ գանդեր էին ներկայացնում. մարդկային գանդեր։ Ամբիոնի սեղանի վերայ իսկ դրուած կային մարդկային ոսկրոտ ծուն աչքերին, որոնք երբէք չեն ղադարում կրակ ու բոց արձակելուց։

Սոջուս էր մի անգամ եւս այն հոչակաւոր հրատարակչի ու գիտնականը, որ 1848ի Գերմանական նշանաւոր գործողներից մէկն էր, որ աշխուժութեան եւ աշխատութեան տիպար է ներկայացնում իւր ծերութեան այդ հասակի մէջ իսկ։

Աջ ծեռքը, այժմ մի մարդկային ջանդի վերայ, աչքերովն ասելի քան բերնով, խօսում էր նա։ Եւ նորա ձայնը հետզհետէ ասելի բարձրանալով, սկսում էր սրանը ընդացնել։ Այդ ձայնի մէջն էր որ գիտնականի հեղինակութիւնն էր փայլում. այդ ձայնը, որին չէ կարելի չը հաւատալ, չը վստահիլ—դա Գիտութեան, դա Ճշմարտութեան ձայնն էր, խրոխտ եւ ահեղ, անյողդորդ եւ յստակ։

Աչս նա բարձրացրեց իւր գլուխն ու ցնցեց։ Ձեռքին ունէր մի մարդկային ջանդ։ Դանն ծայիտը բերնի անկիւններին, նայեց նա բոլորին եւ երա-

ամէնքը, կարծում էինք որ հայոց կաթողիկոսը, ծանօթ իր ժողովրդի կեանքին, ընտրեալների միայն պիտի յանձնէր պատասխանատու պաշտօնները, իսկ մնացեալ հաստափոր վարդապետների և եպիսկոպոսների ձեռքը մաճ տալով, պիտի ուղարկէր գաշտերը հերկելու և վարելու։ Բայց այսօր հակառակն ենք տեսնում. ասպարէզը դատարկւում է զէթ եղածների միջի լաւագոյններից և նրանց տեղը դրվում են այնպիսի անձնաւորութիւններ, որոնք միայն վռնտուելու արժանի են և ոչ հասարակական գործեր վարելու։

Ամենառաջին օրինակն է Պարսկաստանի և Հնդկաստանի առաջնորդական խնդիրը։ Եսայի արքեպիսկոպոսը, պաշտօնական կերպով նշանակուած իբր պատասխանատու իւր ամէն մէկ գործին, թէ՞նչ կասէք որ յանկարծ Էջմիածնից հառնում է տեղապահի անունով, ամէն բան խառնշտորող, Աւվադեանի պէս մի հոսոս վարդապետ, որ իբր հակաթոռ Եսայի արքեպիսկոպոսին, գնում նստում է Սպահանում։ Պատահում են խնդիրներ առաջնորդից բացասած, որոնց մասին ս. Սինոդը կամ կաթողիկոսը փոխանակ ուղղակի թեմական առաջնորդի —իրեն հետ յարաբերութիւն ունենալու, բանակցում են նոր վարդապետի հետ և իրաւունք են տալիս նորան, ի ներկայութեան թեմական առաջնորդի, նրանից մերժումն ստացած խնդիրների վերաբերութեամբ, դրական հրամաններ արձակել։

Եւ այդպէս, հոգևոր բարձրագոյն իշխանութիւնը հակաթոռներ հաստատելով ամէն մէկ թեմում, դէտ ու լրտես կարգելով ամէն մի եպիսկոպոսի վերայ, չէզոքացնում է նրանց գործունէութիւնը, նսեմացնում նրանց նշանակութիւնը հասարակութեան աչքում, երկպառակութիւն սերմանում և հակասութիւն-

ների ենթարկում իր հովուած հօտերը... այդ է ահա այժմ, կղերի վարչութեան ոգին, որ յիշեցնում է մի յայտնի կրօնական հաստատութիւն։

Որպէս երևում է, եպիսկոպոսների բոլոր թողել են իրանց բարերար ազդեցութիւնը ծերունի կաթուղիկոսի գագաթի վերայ այն չափով, որ այս վերջինի բոլորը այլ ևս չէ զօրում իւր կարգին։ Եւ ինչպէս կուզէիք որ պրդէն 70-ից անց հասակով մի կաթուղիկոսի դողդոջուն բոլորը ոյժ ունենար սեղմելու հաստագլուխների գագաթներ։

Մի այլ օրինակ։ Ամբողջ աշխարհը և ազգերի ամեն տեսակ լրագիրներ զբաղուած են և հետաքրքրւում են հայերիս համար վերջերս երևան եկող կարևոր հարցերով. (բացի ի հարկէ կաթուղիկոսից, որի մեռելային անգործութիւնը մեզ ապշեցնում է) և երբ մենք էլ մեր կարգին, որպէս մասնակից նրանց ամեն մի թշուառութեան և յաջողութեան, —եթէ երբէք հանգամանքները մեզ թոյլ են տուել—նրանց մասին մի լուր ենք յայտնել և այն էլ մի-երկու խօսքերով, թէ՞նչ կասէք, երբ թիւնաւոր սողունները դուրս են թափւում իրանց խոնաւ անկիւններից և ամեն կերպով աշխատում են թիւնաւորել, խայթել և ոչնչացնել այն ամենը, ինչ որ դեղթափ էրլինելու իրանց թոյներին... անվերջ մատնութիւններ...

Վերջապէս, նոյնանման հազարաւոր երևոյթներ ամեն օր, ամեն մի բոպէ մեր աչքի առաջ երևան գալով, մեզ անկարելի է դարձնում հանգուրժելու և լռելու. ինչպէս լռես և մի՞ թարուես խաբուսիկ երևոյթներով։ Այդ նման է նրան, որ կապես մէկին, տանջես նրան և պահանջես նրանից, որ ծիծաղի և կատակներ անէ։

Այս և այլ այսպիսի շատ փաստեր ցոյց են տալիս թէ որքան իրաւացի՞ ենք մեր մտրակների հարուածները։ Քանի կեղտը

տիրում է, մտրակը միշտ լարուած, կը լինի մեր ձեռքում։

Ուր դեռ խօլերայի բացիլների գոյութիւնը շարունակւում է, այնտեղ և անհրաժեշտ է կարբոլեան թթուատի գոյութիւնը...

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՈՒՐՄԻՅԵՑԻ

—

27 Նոյեմբ. 94

Ահա մի յա՛ի շաբաթ է որ այստեղ ժամանել է առաջնորդական փոխանորդ Գարեգին քահանայ Պօղոսեանը։ Ինչպէս իմանում, ենք տեղիս քաղաքի և բոլոր գիւղերի կրթական ու ազգային թափուր մնացած խնդիրները յանձնուած են իրան։ Ինչպէս ուրիշ անգամ առիթ ունեցել ենք խօսելու, որովհետև մեր գաւառներում կրթական ու մտաւորական և նոյնիսկ քաղաքական շատ ծանր ու կրնճրուտ խնդիրները բեռնուած են քահանաների վերայ, յոյս ունինք որ Գործակալը որ յատկապէս նշանակուած է այդ բաների համար, յարմար առիթ և լայն ասպարէզ ունենալով, մեծ զարկ կը տայ այդ խեղճ, թշուառ ժողովրդի մտաւոր զարգացման գործին, բռնելով մի խոհուն յառաջադիմական ընթացք։

Նա իւր կրթութիւնը ստացել է Վանում և քահանայ ձեռնադրւել Թաւրիզում։ Միրում է միշտ լինել ժողովրդի հետ և հսկել նորա ամեն մի ընթացքը։ Այժմ սկսել է ման գալ գիւղերում և պատարագ մատուցանել։ Անցեալ կիւրակի Զարբաղումն էր, որտեղ կարդալուց յետոյ առաջնորդական կոնդակը, մի համառօտ քարոզ խօսեց, բացադրելով ժողովրդի թշուառութեան պատճառների ինչից առաջ գալը։

Աղգային ուսումնարանը որ մինչև նոյեմ. 15-ը ուսուցիչ չը լինելու և ժողովրդի անտարբերութեան պատճառով փակ էր, այս օրերս բացուեցաւ, այն էլ շնորհիւ պ. Միհրան Բաղդասարեանի որ թողնելով Ամերիկան, գաղափարը բերել ձգել է իրեն այստեղ, որը ուսուցչութեան պաշտօնը ստանձնեց լոկ մի

ծայնը հնչից այսպէս։

—Ներկայացնում եմ ձեզ մարդկային մի գանգ։ Ես ոչ գանգաբան եմ եւ ոչ էլ կուզենայի լինել... ոչ պաշտօնական փիլիսոփայ եմ եւ ոչ էլ կուզենայի լինել...

Դիտնականը երեւի շարունակում էր երէկուանից կիսատ մնացած դասախօսութիւնը։

—Ես պարզապէս—շարունակեց նա—ճանաչում էի այս գանգի տիրոջը, երբ նա կենդանի էր եւ մեր մէջ։ Սա մի գծուծ մարդու գանգ է. մի պընակալէզի, որ միշտ պոռնկային ժպիտը դէմքին, մտաւորական կոկետութեամբ զինուած՝ քծնել է իրանից ուժեղների առջեւ, լղել նորանց պնակները ու... ծեռքերը։ Աղաչել է որ իրան քաղցած չը թողնեն. եւ նորան չեն թողել, որպէս չեն թողնում մի շան։ Ստիպուել է ոտնակոխ անել անձնասիրութիւնը եւ ամեն ինչ որ աւելորդ է մի պարազիտի։»

Ցած գրեց գանգը։ Արհամարհոտ ժպիտը ամպի պէս սահեց նորա դէմքի վերայից։ Նա ցուցամատով խփեց սեղանին, առաջ պարզեց իւր քրիստոսային

գլուխը եւ կրկին ձայնով շարունակեց։

—Այո... ասաց նա—սա ներս է սողսկել ու ապրել ոչ թէ ուժով, որպէս անում են բաւական թուով պարազիտներ, ոչ թէ բաջութեամբ, այլ գործադրելով այն բոլորը ինչ որ քծնութիւն է յորանում. զգենալով ճանճի աներեսութիւն եւ շնական ստորութիւն.. եւ նրան տուել են փշրանքներ. որովհետեւ կան մարդիկ, որոնք այդ տեսակ յատկութիւնների տէր անձեր են փնտռում, որպէս զի իրանց ոչնչութիւնը ծածկեն եւ գոնէ մի տեղ, մէկի վերաբերութեամբ, քիչ բարձր լինեն։

«Եւ ահա—շարունակեց դիտնականը—այդպիսի փշրանքներով մեծացած գանգն է, որ այստեղ, դրել են այս միւս գանգերի կողքին։ Նայեցէք այստեղ. ճակատ չունի այս գանգը. մտաւորական ծիւրումը անխուսափելի է եղել սորա համար. ուղեղի պէտք չէ ունեցել, որովհետեւ իւր քծնութիւնով լցրել է միշտ ստամոքսը...

Ցետոյ յանկարծ լռեց եւ աշխուժով սկսեց դանգերի մէջ փնտռել մի բան։

Այդ տարօրինակ դասախօսութիւնը լեցած զարմա-

ցրնում էր. որքան այլանդակ էր երազս, չէ։

II

...Երբ նորից նայեցի, ծերունին կծու ժպիտով մատը դրել էր աջ ծերուին բռնած մի ուրիշ գանգի վերայ եւ հարցնում էր։

—Իսկ սա. այս մեծ գանգը... չը լինի թէ կարծում էք որ մի գիտնականի գանգ է։ Ես դիտմամբ այդպէս խոշորն եմ ընտրել։ Եւ կամ դուք կարծէք թէ խելօք եւ մեծամեծ (!!) գաղտնիքներով ուռեցրել է գանգը... գինեմոլի էլ չէ... դուք մի աստուածաբանի է, ա...

Ու քրքջաց իւր դիւային քրքիջով, որին ենթարկողը զգում է մի սարսուռ։

Ֆոխտն էր այդ, նորանն էր այդ քրքիջը, որի իւրաքանչիւր թոթռումը մարմնացած կծու հեգնութիւն է, սպանիչ ծաղր։

(Կը շարունակուի)

մարդու խօսքով։

Որովհետև նախկին հոգաբարձուների ժամանակը վաղուց արդէն լրացած է, թէև գալծակալը անցեալ շաբաթ լուր տուաց որ ժողով կազմեն ու նոր հոգաբարձուների ընտրութեան ձեռնարկեն, բայց երբ որոշեալ ժամը հասաւ, ոչ ոք ներկայ չըգտնուեցաւ ժողովին. բանից դուրս եկաւ որ մի թուրք հարսանիքի էր հրաւիրել իրենց, աւելի յարմար էին տեսել այնտեղ գնալ հանդիսատես լինել ամեն տեսակ անբարոյական խաղերի ու զուարճութիւնների և զուր տեղը վատնել 15 թուման փող, քան թէ գալ մասնակցել իլանց գաւակների դաստիարակութեան, կրթութեան և ուսումնարանական թափուր մնացած խնդիրների կարգադրութեան մասին։ Շատ զարմանալի է մեր ժողովրդի գործերը. չնչին բաների համար ամենագին գումարներ են վատնում, բայց երբ խնդիրը գալիս է ազգային ամենահարկաւոր գործերին, կաշեաս ձեռքները կապում են, չեն ուզում գրպանները դընել և սկսում են լալ։

Մի քանի օր առաջ երբ գալծակալը մի ինչ որ բանի համար հարկադրուեցաւ փող հաւաքելու, հազիւ հազ կարողացաւ 4 թուման ուղղել. բայց երբ խնդիրը գալիս է քէֆի, նոյն այդ ժողովուրդը մի գիշերուայ մէջ 15 թուման վատնում է ամենայն հեշտութեամբ, առանց մի գժգոհութիւն յայտնելու։ Ե.

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԷԺԻՑ

5 դեկտեմբ. 94

Ձեր յարգելի թերթի ընթերցողներին յայտնի էր Աբսէն աբեղան Լբրև տեղիսթեմական առաջնորդի յաջորդ, ուղևորուեց դէպի Սալմաստ, սակայն այժմ նա ոչ թէ յաջորդ է հանդիսացել, այլ [illegible] մի պատիժ սալմաստցիների համար։ Մոտիկ ժամանակում մեզ յայտնում են Սալմաստից [illegible] շաղրութեան արժանի լուրեր, որոնց մէկ աւելի աչքի ընկածներն հետևեալներնեն։ Աբսէն աբեղան ինչպէս պատահում է, գնում է Հին քաղաք (Քոհնա շհար). այն տեղ յայտնում են նրան որ մի անբարոյական թէ արբեցող կին կայ։ Այդ [illegible] ապէս, իսկոյն կնոջը կանչում է և առանց քննութեան, թ[illegible]ուրը ճիշտ է կ[illegible]ւ, կապել տա[illegible] հրամայում իր [illegible]ին ծեծեն [illegible] մի կողմից քացիով։ Այն տեղի հայերից ոչ մէկը չէ համարձակվում միջամտելու միայն թուրքերը այդ [illegible] բարոյութիւնը տեսնելով և չկարողանալով տանել, մէջ են մտնում ու ազատում կնոջը, բայց համարեա բոլորովին անշնչացած դրութեան մէջ։ Աբեղան սրանով չէ բաւականում. կապել է տալիս ձիու վերայ և հրամայում է որ տանեն Հալվթվանձեն գոմի մէջ. (որը ծառայում է իբրև բանտ) և մինչև որոշեալ տուգանքը չստանան, չարձակեն։ Երկրորդ դէպք։ Աբսէն աբեղան Փայջուկ գիւղով անցնելիս, հանդիպում է հարսանիքի այն ժամանակ, երբ արդէն ուզում են նորա հարսին տանել։ Յայտնի չէ թէ որտեղից, լսում է նորահարսի հասակով երիտասարդ լինելը (15—16 տարեկան), ծառային ուղարկում է որ ասէ թէ իրաւունք չունին հարսը առանելու, որովհետև փոքր է, պէտք է պսակը քանդուի։ Նոր հարսը ազգականները բերում հինգ թուման կաշառք տալիս և թոյլտուութիւն են ստանում. այժմ այդ աբեղան Սալմաստեցիների հետ այդպէս է վարուում։ Մի թէ կարելի է կնոջ հետ այդպէս վարուել։ Որտեղ կայ այդ օրէնքը, որ առանց քննութեան դատեն և այն էլ ինչ, մի կնոջ ծեծեն։ Մի թէ նրան ուղարկել են այնտեղ ժողովրդին հարստահարելու։ Եթէ աբեղան շարունակէ այդ ձեւով ընթանալ, շատ չի անցնի որ Սալմաստեցիները նրան չեն ընդունի այլևս իբրև յաջորդ և կը բողոքեն։

Ս. Ա.

Նամակ խմբագրութեան

Թէհրան 8 Դեկտ. 94

Բաւական ժամանակ է որ ուշադրութեան առարկայ է դարձել Թէհրանի կուսակցութիւն կոչուելու համարձակութիւնն ունեցող մի քանի անձերի իրարու դէմ մղած անմարդկան սխալութիւնների համար անվերջ կռիւներ։

Նրանք իր[illegible] ոյժերը փոխ[illegible] ընդարձակ ասպարէզ են ընտրել ազգային հասարակական հիմնարկութիւնները և այդ բոլորին հանդիսատես է Թէհրա[illegible] խեղճ հայ հասարակութիւնը, որ ոչխարի [illegible]ն հնազանդութեամբ և անխոով տանում է իրա[illegible]ն իջած մուրճերի հարուածները։ Իսկ տգիտութիւնը ստիպում է նորան, այդ կրքերի տիրմամբ խորասուզուելու և յաւիտեան կորուստի մատնելու իւր մատաղ և անմեղ սերունդը։

Թէհրանում գոյութ[illegible] է ունեցել քսան և հինգ երկար տարիներից [illegible] մի [illegible]մարան որ երկար տարիներից իվեր մինչև այժմ, չէ կարողացել պատրաստել մի երիտասարդութիւն որ կարողանար մտածել, քննել, դատել, և մի քանի հնադարեան զլուխների ծեռքում խաղալիք և անձնական վրէժխնդ[illegible]Դեան մի գործիք չը դա[illegible] և հասարակական հի[illegible]ունի ժողովրդ[illegible] և բարո[illegible]ք ապագայն։ [illegible]ակոյս առողջ [illegible]տեր մէկ անձ[illegible]նա[illegible]ութիւն եւ կամ [illegible]ութիւն այդ մեր հարցին տիտի տասխանէր [illegible] ճշտութեամբ ասելով. [illegible]ռիկամ ճիշտ էք ասում, բայց պէտք է նախ մտածէիք թէ, այդ երկար ժամանակամիջոցում ով էր մեր մատաղ սերնդի դաստիարակը՝ այդ հարցը ինձ պիտի [illegible]ունեցնէր. ես իսկ պիտի դժուարանայի պատասխանելու, բայց ստիպուած լինելով արդարութեան առաջ խոնարհիլ, ընդունելով նորան իմ հարցին իբր ուղիղ մէկ պատասխան, մենք մեզ բաւականացած պիտի համարէինք, ի նկատի ունենալով դաստիարակի որակութիւնը։

Մենք եթէ ուզում ենք այդ ճշմարտութիւնը ներկայում ևս հաստատել, պէտք է մտնենք մի բոզարկեալ խոր վիրապ որ յաւիտենական գերեզման է գաղափարների և մի խոր անդունդ յառաջադիմութեան։ Սրա այդ մահացուցիչ փասում երիք չորս տարի գործել է այն դասախարակը, այն զզուելի միաղմը որ վերին ասպիճան փչացրած լինելով Թէհրանի հայ հասարակութեան մատաղ սերունդը, բոլորովին իմաստակ և անկենդան մարմիններ է դարձել նրանց, այնպէս որ մինչև անգամ այժմ էլ բաւականանում են այնպիսի մէկ հայերէն լեզուի ուսուցչով, որը ուղղակի չի կարողանում խօսել և իրա միտքը բացատրել այդ լեզուով. նա հա մէկ բրիշ «մանկավարժով» որը երկրի հիւսն էր, իսկ այսօր հասարակութեան անդամներ է պատրաստելու և մանկավարժ դաստիարակելու անամօթութիւնն ունի։

Իսկ Թէհրանի խեղճ հայ հասարակութիւնը, այդ խաւարամտութեան պրոֆէսորի նզիտական ծեւակերպութիւններով այն աստիճան շլացրել և կուրացել է, որ սարսափելի գաղափարներով է վերաբերուում դէպի նոր և ժամանակի ոգուն հարազատ ուսուցիչներ, անուանելով նորանց «անհաւատութիւն քարոզողներ». շատ ծիծաղելի կը լինէր դա, եթէ մենք էլ հիմնուելով այդ մեռած և միանգամայն փտած կարծիքի վերայ, գիտութեան ճշմարտութիւնը դաւանանք։

Թէհրանի հայ հասարակութիւնը պէտք վստահ լինի որ մարդիկ իրանց չար կիրքը յագեցնելու համար ամեն քսու միջոցների դիմելով, հանրօգուտ հաստատութիւնները հիմնայատակ անելու և մատաղ սերնդի գաղափարները ու ապագան յաւիտեան թունաւորելու եւ ոչ մէկ ժամանակ չը պիտի ամաչեն՝ ուստի ժամանակ է ծանաչել մեր անկեղծ սիրողները, եւ ազատել մեր անմեղ մանուկներին յառաջադիմութեան զզուելի դաւանանների ծեռքից։

Ե. Բ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Յիշեցնում ենք մեզ բաժանորդ գրուել կամեցողներին, որ ոչ մի դէպքում ապառիկ բաժանորդագրութիւն չը պիտի ընդունուի. իսկ մեր գործակալներին էլ ըզգուշացնում ենք, որովհետև իրենց ուղարկած բաժանորդների գումարների համար պատասխանատուն միմիայն իրանց ենք ճանաչելու։ Այս առիթով խնդրում ենք շտապել հաղորդելու մեզ բաժանորդների անունները։

Ստացանք, Թէհրանում վիմագրութեամբ տպագրուած Ֆրանսերէն մի դասագիրք „Nouvelle Methode“ անունով, աշխատասիրութիւն Ռիշար-խանի։ Այս դասագիրքը շինուած է պարսիկների համար. կարելի է նաև գործածել պարսկահայոց դպրոցներում բարձր դասարանների մէջ։ Մեթոդը և դասաւորութիւնը մեծ դիւրութիւն է ընծայում այն օտարականներին որոնք կը կամենային հիմնաւորապէս սովորել ֆրանսերէնը։ Ափսոս միայն որ գիրքը տպագրած է վիմագրութեամբ և հետևապէս դժուար կարդացուող։ Մինչև այժմ գործածուող փտած և անպէտք Մարգոից՝ այդ նոր դասագիրքը, որ ունի իր մէջ նաև քերականութիւնն ամբողջ օրինակելի դասերով՝ հազար անգամ լաւն է։ Գինը յայտնի չէ. ծախուում է Հեղինակի մօտ և գրավաճառանոցներում։

"Դավրէժից, Սետրակ Միրզոեանը պաշտօնական կերպով պահանջում է մեզ տպագրել իւր հայհոյանքներով լիքը հերքումները այն լուրի դէմ, որ իբր թէ ինքն երբէք ատրճանակ չէ արձակել մէկի վերայ, ինչպէս որ "Շաւղի„ մի լրատուն հաղորդել էր։ Մենք փակում ենք թերթի էջերը այսուհետև, այդ անմիտ հերքումների համար

—

Մեր բաժանորդներին ազդարարում ենք, որ Յունուարից սկսած այլ ևս ձրի ոչ մէկին չէ ուղարկուելու և ոչ մի համար. ուստի ստանալ կամեցողը թող շտապի բաժանորդ գրուել կամ մեր գործակալների մօտ և կամ դիմելով խմբագրութեան։

—

Հաղորդել էինք որ Վանաք գիւղի դպրոցը բացուելու է. ցաւելով յայտնում ենք որ ոչ միայն դեռ չէ բացուել, այլ և բնացուելու կարծես միտք չունի։ Լալի դանդաղութիւն. ինչն է փակ պահում դպրոցի դռները, չէ՞ որ փող կայ։

—

Դավրէժից մեզ գրում են։ Դեկտեմբ, 5-ին Ղարադաղից Դավրէժ գնացող Սարդու գիւղացիներին, քաղաքից երկու օր հեռաւորութեան վրայ գտնուող ճանապարհին, կողոպտում են մի խումբ աւազակներ և տանում են 300 թուման թղթադրամ, 3 հրացան (այնպու) և 5 ջորի։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մամուլի Տեսութիւն

—

Շատերը մեզ ասում են թէ այդ ինչ նոր բանէ „Մամուլի տեսութիւնը“. ինչ որ դուք գրում էք, Ռուսաստանի թերթերում կան։ Մենք իրաւունք էլ չունինք գրելու այն, ինչ որ չը կայ, իսկ ասողները մոռանում են, որ „Շաւիղը“ գնում է Պարսկաստանի այնպիսի խոր անկիւններում, ուր որ ուրիշ հայ թերթի անուններն իսկ չը գիտեն. օրինակ հէնց երեկ էր, որ Շիրազից մէկը խնդրում էր մեզ գրել իրան թէ ուրիշ ինչ հայ թերթեր կան, որ ինքը բերել տար։

Ուրեմն, մեր „Մամուլի տեսութիւնը“, որի նպատակն է քաղել ուրիշ կողմերում հրատարակուած հայ թերթերից— իսկ սկսած 1895 թուականից էլ անգլիական, ռուսական, ֆրանսիական և գերմանական թերթերից՝—մի շատ կարևոր բաժին է, որը միշտ խնամքով պատրաստուելու է և մի ամփոփ զաղափար է տալու „Շաւիղի“ ընթերցողին, բոլոր թերթերում գտնուող մեծ հարցերի մասին, հարկ եղած կտորներն արտատպելով և նրանց մասին մեր խորհրդածութիւնները գրելով։

Այս յառաջաբանից յետոյ, նախ տեսնենք թէ ինչ նոր բան կայ Կովկասի հայ թերթերում մեր—պարսկահայոց մասին։ Ընդհանուր հայոց թերթերի համար շատ նոր նոր բաներ կան, բայց մեր սրտից, հաւատացէք, տրիւն է հոսում, որ չենք կարողանում գոնէ մի քանի խօսք ասել. եթէ բաղդը մեզ յաջողեց և պաշտօնական հեռագիրների մէջ մի բան եղաւ, այն ժամանակ մեծ ուրախութեամբ կը տպագրենք արտաքին լուրերի բաժնում։ Ինչ արած, այդքանն է միայն մեր իրաւունքը։

Կովկասի „Մշակ“ թերթի № 136-ում Սալմաստի, այլ և Խոյի, մինչև իսկ Ուրմիոյ թեմական տեսուչ մեծարգոյ Մ. Աւետիսեանը մի հերքում է տալել նոյն թերթի № 112-ում եղող մի նամակի դէմ։ Այդ մասին "Մշակի„ № 138-ում, խառն լուրերի բաժնի մէջ, „Ֆորոզի օրագրից“ վերնագրի տակ, գտնուում է ի միջի այլոց սոյն կտորը։

«Առանց ծիծաղի չը կարողացայ կարդալ «Մշակի» վերջին համարում Սալմաստի թեմական տեսչի նամակը։ —Ես չեմ ճանաչում ոչ «Մշակի» թղթակցին, որ մեղադրում է Սալմաստի թեմական տեսչին, եւ ոչ էլ այդ թեմական տեսչին, որ փորձում է արդարանալ....

—Սարփատրստը վերցրել է ոչ թէ 50. այլ 5 ռուբլի, ասում է իր հերքման մէջ Սալմաստի կրթական ղեկավարը... Այդ հերքումը յիշեցրեց ինձ մի անեկդոտ՝

Մէկը մեղադրվում էր գողութեան մէջ։

—Դուք, ասում է դատաւորը, մեղադրվում էք այն բանում, որ ամսիս 5-ին, գիշերը ժամը 4-ին պատուհանից ներս մտնելով, սենեակից իրերիններ էք գողացել։

—Սուտ է, զրպարտութիւն է, վրդովված պատասխանեց գողը. ես ոչ թէ ժամը 4-ին գողացայ, այլ ժամը 6-ին։ Ինչ կասէք։»

„Հերքումներ գրելը մօդա է եղել“ ասում է նոյն գրողը։ Ինչ կասէր ուրեմն, եթէ գար մեր խմբագրատուն և Դավրէժից մի ինչ որ Սետ. Միրզոյեանի մեզ ուղղած հերքումների հետ, նրա ոստիկանական սպառնալիքները կարդար։ Այդ պարանը սպառնում է, եթէ լուր հայհոյանքները չը տպագրենք։ Կարծեմ խմբագրութիւնը վճռել է վոչենալ այդ սպառնալիքից և այսուհետև ուղարկուած այդպիսի հերքումները, մանաւանդ Սետ. Միրզոյեանցինը, ուղարկել Թիֆլիս „Նոր-Դարին“ որ տպագրի. իսկ եթէ նա էլ չը համաձայնուեց՝ Մարսէլ՝ „Արմենիային“, միայն թէ Միրզոյեանցը այդ վերջին դէպքում պիտի անպատճառ բաժանորդ գրուի „Արմենիային։

Ինքը գիտի այլ ևս։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Ֆերդինանդ Լէսէպս, Սուէզի ջրանցքը փորողը, Փարիզում մեռել է 25 նոյեմբերին։

—Չինաստանը առաջարկում է վճարել Ժապոնին այնքան պատերազմական ծախս, որքան որ եր որոշին Չինաստանի հետ դաշն կապած տէրութիւնները։

—Կովկասի լրագիրները հաղորդում են որ պատրիարքական փոխանորդը հրաժարական է տալիս։ Հրաժարեցրած է նոյնպէս, իրանց ազդ. ժողովի կողմից, Ցունաց տիեզերական պատրիարքն։

„ՇԱՒԻՂԻ“ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

Դավրէժ. Սետր. Միրզոեանին. Ձեր հերքումները չենք տպագրելու՝ մեր մասին լուրը այս համարում կարդացէք. իսկ մեր սպառնալիքների վերայ միմիայն ծիծաղում ենք.

Շիրազ. Մկրտում Յովհաննէսեան։ Թերթեր ձեզ կանոնաւորապէս ուղարկուած են, փոստատնից տեղեկացէք։ Փողերը ստացուեցին, մեր յանձնարարութիւնը կը կատարենք։

Արտօնատէր—Հրատարակիչ՝
ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

DE CONSTANTINOPLE

A RECHT

DE MIKHAIL PANIDISI

Il est récemment ouvert à Rècht près de la poste persane un hôtel européen. Des chambres meublées pour les hôtes, des lits et de toutes sortes de confortabilités, d'excellents mets européens et persans.

PRIX ACCESSIBLES

L'Hôtel aura dès l'année de 1895 les journaux „CHAVIGH“et“CASPIE„ Le public est prié de l'avoir en vue.

ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՕԼԻՍ

ՀՅՈՒՐԱՆՈՑ

(HOTEL DE CONSTANTINOPLE)

ՌԱՇՏՈՒՄ

Նոր բացուած է Ռաշտում եւրոպական հիւրանոց, պետական փոստատան մօտ, ընդունում է և հիւրեր գիշերելու տալով ամեն տեսակ յարմարութիւն, պատրաստում է մաքուր եւրոպական և պարսկական կերակուրներ։

ԳՆԵՐԸ ՄԱՏՉԵԼԻ Է՝Ն

Հիւրանոցը 95 թուից կստանայ „Շաւիղ“ և „Каспій“ լրագիրները։

Հրաւիրում է հասարակութեան ուշադրութիւնը։ 2—2